

ՆԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ

ՀՀ ՍՓՅՈՒՌԷԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

108

Սփյուռքի ներկայացուցիչներ

Արմեն Գարսյան. «ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծումից հետո ամեն ինչ ավելի դյուրին է եւ որակով»

ՀՀ սփյուռքի նախարարություն

Արեւիկ Պետրոսյան. «Արվեստիս լեզվով ուզում եմ բարձրաձայնել հայրենիքի շուրջ հայության միասնականության գաղափարը»

Արման Եղիազարյան. «Եթե ուզում ենք նպաստել հայապահպանությանը, պետք է իրականացնենք հայրենադարձություն»

Սփյուռքի ներկայացուցիչներ



Արմեն Գարայյան. «ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծումից հետո ամեն ինչ ավելի դյուրին է եւ որակով»

2011-03-29

-Ինչպե՞ս ձեւավորվեց ՌԴ Պերմ երկրամասի հայկական համայնքը:

-Պերմ գնացել եմ 1988 թվականին ուսման պատճառով: Չէի էլ պատկերացնում, որ կարող է մնամ այնտեղ: Այն ժամանակ Պերմում շատ քիչ հայեր կային` ընդհամենը երեսուն հոգի: Հետո ճանաչեցի մարդկանց, ովքեր ավելի քան հիսուն տարի այնտեղ էին ապրում: Համայնքային մշակութային կենտրոն ստեղծելու առաջին փորձը եղել է 1991 թվականին: Բայց քանի որ Սովետական Միության փլուզումից հետո խնդիրները շատ էին, ոչինչ չէր ստացվում:

2000թ.ընկերներով նորից հավաքվեցինք միասին եւ այս անգամ կարողացանք պաշտոնապես գրանցել հայկական համայնքը: Որպես գործող գրանցված կազմակերպություն` 11 տարի է արդեն գոյություն ունենք: Ի դեպ, անցյալ տարի մեծ շուքով նշեցինք կազմակերպության գործունեության 10-ամյակը: Հանդիսությանը ներկա էր նաեւ ՀՀ սփյուռքի փոխնախարար Ստեփան Պետրոսյանը, ով իր հետ բերել էր նաեւ ՀՀ նախագահի շնորհավորական նամակը: Տոնին մասնակցեցին Պերմի երկրամասում բնակվող ավելի քան 8 համայնքների նախագահները: 2000 թ-ից ստեղծեցինք նաեւ հայկական դպրոց ու համայնք:

Իսկ 2001 թվականից սկսած փորձում էինք Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի կառուցելու համար թուլտվություն եւ հողատարածք ձեռք բերել: Հողատարածքի հարցը, սակայն, լուծել կարողացանք միայն 2007 թվականին: 2008 թ-ին օծվեց եկեղեցու հիմքը: Հիմա կառուցման աշխատանքները ընթացքի մեջ են. 2012 թվականին այն արդեն պատրաստ կլինի: Եկեղեցու կողքին տարածք է հատկացվել նաեւ

հայկական դպրոցի, մշակութային կենտրոնի եւ թանգարանի համար: Կառուցվում է հանդիսությունների սրահ, որից ստացված հասույթը պատկանելու է եկեղեցուն, որպեսզի ապահովի եկեղեցու ֆինանսական կայունությունը:

-Հայկական մշակույթն ի՞նչ չափով է պահպանվում Պերմում:

-Մեր դպրոցը տասը տարեկան է: Երեխաներս տարբեր տարիքի են. մեծ տղաս քսան տարեկան է, աղջիկս՝ տասնյոթ, փոքրը՝ ինը: Բոլորը կարողանում են հայերեն կարդալ, գրել, պարել, երգել... այ սա է հենց ապացույցը, որ մշակույթը պահպանվում է:

-Դժվար չե՞ արդյոք երեխաներին դպրոց ներգրավման աշխատանքը:

-Սկզբում դժվար էր. համայնքը դեռ նոր էր: Ծնողները երեխաներին չէին բերում դպրոց, իսկ հիմա արդեն 40 աշակերտ ունենք: Կա նաև օտարազգիների խումբ: Ուսումնական ծրագրի դասագրքերն էլ ստանում ենք ՀՀ սփյուռքի նախարարությունից: Դրանից առաջ չկար կոնկրետ ծրագիր. անում էինք այնքան, որքան խելքներս կտրում էր: Չնայած հարկ է նշել, որ հայկական դպրոցի ուսուցիչները բարձրագույն կրթություն ունեն: Կարելոր է նաև այն փաստը, որ հայկական կիրակնօրյա դպրոցի ուսուցիչների աշխատանքը վարձատրվում է Պերմ քաղաքի բյուջեից: Հայկական դպրոցը համարվում է Պերմի երկրամասում ապրող ազգային փոքրամասնությունների շարքում ամենամեծաքանակ աշակերտներով դպրոցը:

-Ի՞նչ տվեց Սփյուռքին ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծումը:

-ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծումից հետո ամեն ինչ ավելի դյուրին է եւ որակով: «Արի տուն» ծրագրի հանդեպ մեծ հետաքրքրություն կա երիտասարդների մեջ: Նույնիսկ նրանք, ովքեր մեկ անգամ մասնակցել են, փորձում են երկրորդ անգամ գրանցվել մասնակցության համար: Հայկական համայնքի ներքո երիտասարդական կենտրոնը ուղղակի վերակենդանացել է այդպիսի ծրագրերի շնորհիվ: Երիտասարդները անում են հնարավոր ամեն ինչ՝

ավելի ակտիվացնելու Հայաստան-Սփյուռք կապը:

-Պերմում բնակվող ազգային փոքրամասնությունների հետ խնդիրներ առաջանում են:

-Բացարձակապես խնդիրներ չեն առաջանում: Մենք առաջատար համայնք ենք: Նոր տարին ու մնացած տոները մենք ենք կազմակերպում եւ միասին տոնում մեր հարթակներում` մնացած համայնքների ներկայացուցիչների հետ:

-Մշտական բնակություն հաստատած հայերը մեծաթիվ են Պերմում:

-Հիմա համայնքը բազմաթիվ է: Մեր հաշվարկներով Պերմում կան ավելի քան 45.000 մշտական բնակությամբ հայեր: Բայց երեկ, երբ երգիչ Թաթայի հետ միասին զբոսնում էինք Պերմում, երկու մարդ անցան եւ բարեւեցին մեզ. ես նրանց չէի ճանաչում: Այսինքն` Պերմում զբոսնելուց արդեն հայր հային է հանդիպում: Իսկ Պերմը հզոր, մեծ քաղաք է:

ՀՀ սփյուռքի

նախարարություն



Արեւիկ Պետրոսյան. «Արվեստիստ լեզվով ուզում եմ բարձրաձայնել հայրենիքի շուրջ հայության

միասնականության գաղափարը»

2011-04-01

-Ինքնատիպ գաղափար եք առաջարկել: Շարժառիթն ու թեմատիկ առանցքը ո՞րն է:

-Հայոց մեծ եղեռնը Հայ ժողովրդի համար ոչ միայն կորստի ցավն ու վիշտն է, անմեղ զոհերն են, այլ հայության գաղթը: Հայությունը ասես կտրվեց իր արմատներից, պատմական հայրենիքից, սփռվեց աշխարհով մեկ, բայց միեւնույն է, պահպանեց իր ինքնությունը, իր հայ լինելը, իր լեզուն եւ կրոնը: Սա է հանճարը մեր հնագույն ազգի:

Ես՝ որպես կին արվեստագետ, արվեստիս լեզվով ուզում եմ բարձրաձայնել համայն հայության միասնականության և հայրենիքի շուրջ համախմբման գաղափարը: Հատուկ այս ծրագրի համար հայկական մանրանկարչության թեմաներով ստեղծվելիք տասներկու մեծածավալ նկարները, որոնցում իմպրովիզացիան շատ փոքր տեղ պիտի ունենա, ներկայացնելու է այդ միասնության գաղափարը: Թեման այնպիսին է, որ պետք է դիտողին հենց առաջին հայացքից ճանաչելի ու հասկանալի լինի: «Նշխարք Հայաստանից» նկարների շարքը հոգուս մղումով նվիրաբերելու եմ այս գաղափարի իրագործմանը: Այս ակցիան կրում է մի քանի հիմնական գաղափներ՝ կին, մայր, արվեստագետի վերաբերմունքը կատարված եղեռնագործության հանդեպ, Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակի հավերժացումը արվեստով և աղոթքով, համայն հայության միասնության և համախմբման կոչ, եւ վերջապես՝ ընծա Հայաստանից Սփյուռքին:


-Ստեղծվելիք նկարները առանձին խորագրեր կունենան՝:

-Շարքի տասներկու աշխատանքներն առանձին խորագրեր չեն ունենա, եւ բոլորն էլ կկատարվեն ինձ հատուկ ինքնատիպ եւ արվեստի աշխարհում նոր համարվող ոճով՝ օրգանական ապակու վրա՝ արծաթով եւ ոսկով: Պահպանելով միջնադարյան մանրանկարչության կանոններն ու հիմնական թեմաները՝ հավաքածուն ներկայացվելու է նոր մեկնաբանությամբ՝ որպես հնի ու նորի մի ուրույն սինթեզ: Յուրաքանչյուր ստեղծագործությունն իր պատկերի և գաղափարի մեջ կրելու է Տերունական աղոթքի մի մասնիկը: «Հայր մեր, որ յերկինս ես...հաջորդը՝ «Սուրբ եղիցի անունը քո...», և այսպես շարունակ...: Իսկ հավաքական 12 նկարների այս շարքը կդառնա ամբողջական մի աղոթք: Սա կարծես նաև մի կոչ է՝ «Աղոթենք միասին», որը նույնպես միասնականության գաղափարի շուրջ է հավաքում մեր քրիստոնյա ազգը: Այս ստեղծագործությունների հավաքածուն կներկայացվի իր ամբողջական գաղափարով նախ Երևանում՝ ցուցահանդեսի բացման արարողությամբ, այնուհետ նշխարքի պես կբաժանվի Սփյուռքի 11 համայնքներին՝ հայ հեզևոր կենտրոններին կամ կից թանգարաններին՝ որպես ընծա Հայաստանից Սփյուռք աշխարհին:

Իբրեւ խորհրդանիշ՝ մեկ աշխատանքը կմնա Հայրենիքում:

-Ե՞րբ եւ ինչպե՞ս եք նախատեսում շնորհանդեսը:

-Ապրիլի չորսին կլինի առաջին ցուցադրությունը նեղ շրջանակների համար, ուր հրավիրված կլինի ՀՀ սփյուռքի նախարարը եւ որտեղ կորոշվի նաեւ, թե որ նկարը որ հայկական համայնքին է հանձնվելու: Իմ շնորհակալությունն ու երախտիքն եմ հայտնում ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանին այս գաղափարին սատար լինելու եւ աջակցության համար: Իսկ մինչեւ ապրիլի 24-ը տեղի կունենա ցուցահանդեսի գլխավոր շնորհանդեսը: Խորհրդանշական է նաև բացման արարողության մտահղացումը՝ իր յուրահատուկ մատուցման մեջ: Նախատեսում եմ ցուցահանդեսի բացումը կազմակերպել երեկոյան: Բոլոր հրավիրվածները նախապես ուղարկված հրավիրատոմսերի մեջ կունենան եկեղեցական մոմեր, կրակայրիչներ և Տերունական աղոթքը: Կոմիտասի անվան լարային քառյակի կատարումների ներքո հյուրերը կհավաքվեն մուտքի մոտ, հարակից բացօթյա տարածքում, որտեղ կկատարվի բացման արարողությունը: Հոգևորականը կոչ կանի հրավիրվածներին վառել մոմերը և միանալ աղոթքին: Լոռույան մեջ կլսվի խավարը լուսավորող և բոլորին համախմբող Տերունական աղոթքը: Աղոթքը ինքնին մարդկությանը համախմբելու հզոր ուժ է:



Արման Եղիազարյան. «Եթե ուզում ենք նպաստել հայապահպանությանը, պետք է իրականացնենք հայրենադարձություն»

2011-03-28

-Պարո՞ն Եղիազարյան, ի՞նչ կփոխի հայեցակարգի ընդունումը մեր իրականության մեջ: Ի՞նչ նշանակություն կունենա այն:

-Մենք գործ ունենք գաղափարախոսության հետ: Այն նախանշում է, թե ինչ է լինելու, այսինքն՝ եթե ուզում ենք հայրենադարձություն, ինչ

պետք է անենք: Համաշխարհային փորձը, եւ մասնավորապես՝ հայկականը, ցույց է տալիս, որ եթե ունենք մեծ սփյուռք, որտեղ կա հայապահպանության խնդիր, եւ ժողովրդագրական, տարածքային-ռազմավարական ու եւս մի քանի նմանօրինակ խնդիրներ՝ Հայաստանում, ապա դրանց լուծման հիմնական միջոցներից մեկը հայրենադարձությունը պետք է լինի: Եթե ուզում ենք նպաստել հայապահպանությանը Սփյուռքում եւ ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը ՀՀ-ում, պետք է իրականացնենք հայրենադարձություն: Երբ մշակում էինք հայրենադարձության հայեցակարգը՝ որպես տվյալ գործընթացի գաղափարախոսություն, ելնում էինք տիրող իրավիճակից: Մենք ունենք 3 միլիոն 200 հազար հայ Հայաստանում, 7-7.5 միլիոն հայ՝ Սփյուռքում, եւ հարաբերությունների կառուցումը, այս ամենից բացի, նախանշում է նաեւ հայրենադարձությունը, որի նպատակը գլխավորապես հայապահպանությունն է, ինչպես նաեւ Հայաստանի ժողովրդագրական խնդիրների լուծմանը նպաստելը: Մենք, այդ հրամայականից ելնելով, ձեռնարկեցինք այս գործընթացը: Նախարարության աշխատանքի երեք հիմնական ուղղություններն են՝ հայապահպանությունը, համահայկական ներուժի համախմբումն ու հայրենադարձությունը:

-Որո՞նք են հայեցակարգի գլխավոր խնդիրները եւ հիմնական նպատակները:

-Հայեցակարգի հիմքում դրված չէ աշխարհասփյուռ հայության զանգվածային հայրենադարձության կազմակերպումը եւ այդ գործընթացի կանոնակարգումը: Սահմանվող դրույթները վերաբերում են այն անհատներին, որոնք ցանկություն կհայտնեն կամովին բնակություն հաստատել Հայաստանում: Նրանք կարող են լինել անհատներ կամ ընտանիքներ: Այսօր արդեն այդպիսի մարդկանց որոշակի հոսք կա: Հայեցակարգի նպատակը եւ խնդիրներն են՝ սահմանել «հայրենադարձ» եւ «հայրենադարձություն» հասկացությունները, առանձնացնել հայրենադարձության հետ կապված այն առաջնահերթությունները, որոնք ենթակա են պետական կարգավորման, հստակեցնել կառուցակարգերը, ամրագրել «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի գլխավոր սկզբունքները:

-Ըստ հայեցակարգի՝ ո՞վ է համարվելու հայրենադարձ:

-Երբ ասում ենք «հայրենադարձ», նկատի ունենք Հայաստանից դուրս բնակվող հայկական ծագմամբ մարդուն, որը ՀՀ քաղաքացի չէ, կամ լինելով ի սկզբանե այլ պետության քաղաքացի՝ ձեռք է բերել նաև ՀՀ քաղաքացիություն: Իսկ քաղաքացիների հարցերը կարգավորվում են միգրացիոն օրենսդրությամբ, ըստ այդմ՝ հայրենադարձ կարող է համարվել ոչ ՀՀ քաղաքացին:

-Ինչպե՞ս է կանոնակարգվելու գործընթացը:

-Հայրենադարձությունը՝ որպես գործընթաց, ունի տրամաբանական սկիզբ եւ ավարտ, սկսվում է տվյալ անձի կողմից հայրենադարձվելու ցանկություն հայտնելուց եւ ավարտվում է Հայաստանի կյանքում նրա լիակատար ինտեգրմամբ: Այս ճանապարհին այն հարցերը, որոնք պետք է լուծվեն պետության կողմից, մեզ մոտ շարադրված են «Հայրենադարձության փուլերը եւ կառուցակարգերը» գլխում: Մյուս գլուխն ուղղակի վերաբերում է ինտեգրման ձեւերին: Ինտեգրումը մենք բաժանել ենք մի քանի ուղղությունների, որոնցից, մասնավորապես, կարելու են սոցիալ-տնտեսական, հասարակական-կենցաղային եւ իրավական ուղղությունները: Այսինքն՝ այս ամբողջ գործընթացը պետք է հանգեցնի «ՀՀ լիարժեք քաղաքացի» կարգավիճակին:

-Ի՞նչ դեր ունի քաղաքացիություն ստանալու գործընթացը հայրենադարձության իրականացման մեջ:

-Նշեմ, որ հայրենադարձությունն ուղղակիորեն չի հանգեցնում քաղաքացիություն ստանալուն: Ավելին, որոշ հայրենադարձներ կարող են քաղաքացիություն ձեռք բերել մինչեւ հայրենադարձվելը: Իսկ երեւ սփյուռքահայր չունի ՀՀ քաղաքացիություն, ապա նրա համար քաղաքացիություն ստանալը դառնում է հայրենադարձի ինտեգրման կարելու փուլերից մեկը: Այսինքն՝ քաղաքացիությունը տրամադրվում է ինտեգրման ընթացքում, որպեսզի հայրենադարձը կարողանա լիարժեք ինտեգրվել Հայաստանում: Բայց գործընթացը քաղաքացիությամբ ոչ սկսվում է, ոչ ավարտվում: Այն պահից, երբ

հայրենադարձը կստանա ՀՀ քաղաքացիություն, նրա իրավունքները կհավասարեցվեն ՀՀ քաղաքացու իրավունքներին, իսկ նրան որպես հայրենադարձի տրված արտոնությունները կմնան մինչև ինտեգրման փուլի ավարտը: Այդ որոշակի արտոնությունները կնպաստեն նրա ինտեգրմանը: Մասնավորապես՝ մենք նախատեսում ենք մասնագիտական, լեզվական դասընթացների կազմակերպում, վարկերի մասով որոշակի արտոնյալ պայմաններ, պետական ուղղորդում, աջակցություն եւ այլն:

-Ինչպիսի՞ն է եղել պատկերը մինչ այսօր, ինչպե՞ս է կարգավորվել այս ոլորտը:

-Մինչ այսօր համապատասխան գաղափարախոսություն եւ օրենք չեն եղել, երեւոյթը չի կանոնակարգվել: Հայկական ծագումով մարդկանց համար եղել են արտոնություններ՝ ՀՀ կացության հատուկ կարգավիճակի տեսքով:

-Իսկ ինչպիսի՞ն է պատկերը ներկայումս հայկական սփյուռքում:

-Սփյուռքում ապրում է մոտ 7-7.5 մլն հայ: Նրանց որոշ մասը Հայաստանի անկախության վերականգնումից հետո հաստատվել է հայրենիքում: Այսպես. 2006-2009 թթ-ին ՀՀ կացության հատուկ եւ մշտական կարգավիճակ է ստացել շուրջ 3 հազար սփյուռքահայ, 2005-2009 թթ-ին անշարժ գույք է գնել շուրջ 15 հազար սփյուռքահայ, եւ վերջին երկու տարվա ընթացքում ՀՀ քաղաքացիություն է ստացել շուրջ 10 հազար սփյուռքահայ:

-Ի՞նչ փուլում են ներկայումս աշխատանքներն այս ուղղությամբ, եւ մշակված հայեցակարգի բովանդակությունը որքանո՞վ է իրագործելի հայաստանյան իրականության ներկա պայմաններում:

-Այն արտոնությունները, ուղղությունները, որ սահմանում է հայեցակարգը, լիովին իրագործելի են: Հիմք ենք ընդունել Հայաստանի ներկա պայմանները եւ հնարավորությունները, այսինքն՝ ինչ կարող է տալ հայրենադարձին Հայաստանն այսօր: Այժմ աշխատում ենք օրենքի նախագծի, ենթաօրենսդրական ակտերի եւ հայրենադարձների

ինտեգրման տարբեր ծրագրերի մշակման վրա, որպեսզի նախապատրաստենք իրականացման փուլը: Կարելորն օրենքի ընդունումն է, որը, հուսով եմ, համապատասխան ընթացակարգ անցնելուց հետո կընդունվի Ազգային Ժողովի կողմից: Նախագիծը շրջանառության մեջ է: Հայեցակարգը՝ որպես գաղափարախոսություն, հավանության է արժանացել, ինչի հիման վրա էլ մենք շարունակում ենք մեր աշխատանքները:

-Որքա՞ն ժամանակում կյանքի կկոչվի գործընթացի մեկնարկային փուլը:

-Երկու-երեք տարի է սահմանված ինտեգրման փուլի համար, դրանից ավել այն տեւել չի կարող:

-Մոտավորապես ի՞նչ զանգված էք սպասում առաջիկայում ընդունելու հայրենիք:

-Եթե դատենք վիճակագրությունից, հայերը երկու եղանակով են գալիս Հայաստան. նրանք, ովքեր հայեցակարգով նախատեսված ընթացակարգի կարիքը չունեն, եւ նրանք, ովքեր ունեն: Սահմանագիծը բնականաբար սոցիալական վիճակն է: Սպասվող զանգվածն, ըստ իս, կտատանվի 1500-ից 2000 մարդու միջեւ: ՀՀ քաղաքացիություն ստանալու համար դիմողների թիվն անհամեմատ մեծ է, բայց դա չի նշանակում, որ նրանք բոլորը Հայաստանում ապրելու են: Իսկ «հայրենադարձ» հասկացությունը նախատեսում է մարդ, որը մշտական բնակության է գալիս Հայաստան: «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո տեւպերը, կարծում եմ, կտրուկ կաճեն:

-Հայեցակարգի հավանությունից հետո որո՞նք են հաջորդ քայլերը:

-Դրան պետք է հետեւի «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որն արդեն հստակորեն կսահմանի գործընթացի իրականացման պետական լիազոր մարմին, իրականացման, արտոնությունների տրամադրման կարգերը, ուղղությունները եւ այլ անհրաժեշտ միջոցառումները:

Հարցազրույցը՝ Նելլի Դավթյանի